

Միջազգային միջպետ Ժանտախտէն կը կտարուէր՝ անպին Քաջբերունեաց գաւառն ալ (ըստ ՄԿ. Նաղաշի նոյն յիշատակարանին) Աքանպարի իրանց որդիէն . որ և Արճէշը կ'աւերէ . « և գուազերեցն Արճիշու , այլ շորհալի , գրագիր և փիլիսոփայ՝ ի վառան թոնիրն խորվեցին . և զպատիկ ըուպիսն՝ ա՜մննայն ընտանեօք գերի բերին յԱՄԻԹ » . զիս բազմաթիւ գերիներ , չարներ և աղջկունք անօրէններու ձեռքը մասնուած՝ ըսայիսին չեա Տիբրանակերա կը բերուին : Նաղաշ մահը աչք առած՝ ամէն չարք կ'ինէ զանոնք զպատելու համար և 14,000 րանկայ վճարելով իլանպին՝ իր նպատակին կը հասնի . « Ազատեցան Աստուծով ըուպիսն և չարսունքն և աղջկունքն՝ անարատ մնալով յանօրինացն , կարգութեամբն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի » :

Մկրտիչ այլ յիշատակարանին մէջ կը թուարկէ իր իշխանութեան սակ եղած քաղաքները . « Մկրտիչ սոսկ անուամբ եպիսկոպոս Ամիթ քաղաքի և Մերսնայ , Ռուհայու և Թիլիզուրնայ , Հինու և Արդուս » :

Մերտինը սակայն չի մաքրուիր 1449ի Ժանտախտովը . ճիշդ 20 տարիներ ետքը՝ 1469ին՝ առաջնոյն նման կու գայ նորէն աւերելու այդ քաղաքը . և այս անգամ Մկրտիչ , ծիրունի հալիլը՝ կ'երդէ « Արաբիչն արարածոց մեզ բարկացաւ՝ » քերթուածը . յիշելով նաև այն սուղիլը՝ զորս գրած էր քսան տարի առաջ վերադիշալ Ժ. Աստուածաշունչին մէջ : Հետեւեալն է այդ սուղին յիշատակարանը .

« Ես Մկրտիչ եպիսկոպոս ծառայ կուսին՝ Աշք տեսայ դառն կըսկին ողորմագին . Լալով լացի և ողբացի արտասուագին , Դառն արտասուօք զոլքս ասացի նոր մեռելին : Ի Հայոց մեծ թվականի յինն հարիւրին . Իս համառոտ այլ աւելի տաննուութին . Աշք տեսայ զոլք և զհառաչն դառնագին , ՁԿերտին քաղաքն արբը զամենքն լաւագին » :

Տողբէն յայսին կը տեսնուի որ այս սուղը գրած է Մկրտիչ 1469ի տեղի ունեցած

1. Աս տողը առաջին անգամ ամենահին Տաղարանին (1518ի տեղ) մէջ տպուած է :

Ժանտախտին առթիւ : Նօտարք Հայոցի մէջ բերուած (յէջ 209) այն տարեկիրը՝ որ ՁԺԹ թուին (= 1463) կը զնէ Նաղաշի այս երգին յօրինումը՝ ապահովապէս սխալ է :

Պատմութիւնը և Յիշատակագիրը այլ եւս կը ընեն : Արզն 1469ին Մկրտիչ առ նուազն ութնուստ տարուան մօտ ողէտք էր բլլալ , քանի որ 1418ին զինքը իբրև սարկաւազ ձանչանք , և անշուշտ մի քանի տարի վերջ կըրեց մահկանացուն , անժանօթ քարի մը սակ թաղուելով :

Շարայսարիչի Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Զ Մ Շ Կ Ի Կ

(969-976)

ԺԹ. — Ռուսական պատերազմ. — Չմկկկի յաղթաւ . նախերը Ռուսաց վրայ . — Վարդ Սըլերոս . — Դարսնած բանակը . — Ռուս Գոշտաթը . — ՄԷ. նամարտներ :

Նիկիփոր , Բուլղարաց արշաւանքներէն ազատելու համար՝ քաղաքագիտական մեծ սխալ մը գործած էր : Ռուսերը յորդորած էր Բուլղարիա արշաւել (969ին) , և անոր կողպուլուսովը Հարոտանալ : Այսու կը յուսար երկու վառանքներ իրարու բաղիւնէ , սկալացնէ . փշրէ . բայց Ռուսերն այնքան շուտով սիրեցին Բուլղարոյ , որ Նիկիփորի ծրագիրը բոլորովին հակառակ կերպով իրագործուեցաւ . փոքր սպառնալիքին՝ մեծը յաջորդեց , Բուլղարներու տեղ՝ իրեն զրացի ունեցաւ Ռուսերը , որ աւելի քաջ , ընչաքաղց և յանդուգն էին :

Քալաքիլլոս անուամբ յոյն իշխանը , որուն յանձնուած էր Սլաններուն զէպ ի Բուլղարիա արշաւանքի մը հրաւիրողի թաւնիլ , զեղծաւ իր պաշտանով : Թեա զանոնք Բուլղարիա հասցնելու , յորպոսեց Պուլխալ , սիրիլ , յունական գանձերով Հարոտանալ , պոյմանաւ որ զինքը Բիւզանդիոսի կայսր ընեն :

Որ և իցէ թշնամոյ յաղթելու համար՝

հարկ է նախ նիւթական այժ ունենալ, յետոյ լաւ անդեակ ըլլալ անոր ներքին վիճակին ։ Ռուսեր՝ այժ ունենին, Քալուքիյր՝ գիտաւթիւնը . երկուքը մեքցած էին Յոյնբուն ունեցած էր , աւելի ահեղ վառած մը չէր յիշեր ։ Բարերադպարար Բիւզանդիոնի Չմբըկիի մը կ'իշխէր , և իրեն հրամանին տակ Անմահհներու զունդը պիտի պատերազմէր ։

Չմբըկի՝ Ռուսաց իշխանին , Վինցէլուաի հրահանոյ գրկեց շուտով Բուլղարիան դատարկելու և հեռանալու ։ Ռուսեր գերաւ չէին թողոր երկիր մը , ուր սր և է պատրուակաւ մտած էին ։ Վինցէլուա պատառխանեց . « Պատասխանաւ տալու համար՝ Պօլիս պիտի դամ » ։

Չմբըկիի գատերազմ հրատարակեց (970) և արևելեան բանակը փոխադրելով Ալգիրիանուպոլիս , հրամայեց թշնամութիւնքը սկսիլ . սպարապետ ընտրուած էր Հայ մը՝ Վարդ Աբըրուս ։ Ռուսեր , աւելի պատրաստ , Բուլղարներու , Հունգարներու , Փացինաքներու բազմաթիւներով ածած բանակով մը , որ ընդ ամէնը երեսուն հազար զինուորներէ կը բաղկանար , և երեք թեի բաժնուած էր՝ անցաւ Հեմոս լեռնէն , հեղեղօրէն թրակիոյ գաշաբունն մէջ գահալիծեցաւ , լայնեկաւ , սողոցեց , աւերեց , գիւղերն փռեց և բանակեց Աբըրուսը , իր բանակովը միասին , Ալբերանուպոլսի մէջ ։ Պաշարեալները ամէն որ դիշերային նուազահանդէսներ կը վայելէին . որովհետեւ Ռուսերը զափ ալ թմբուկով , սրիւններով , քնարներով կ'երկէին , կը պարէն պարիտներուն առջև , և վարդի անդրսովներ կը ծաղկէին ։ Վարդ բաշասիրաւ էր , բայց միանդամախ նենգաւոր . չէր ուզեր զահեր տալով յաղթել , երբ փառքը աւելի աման գնով կըրար առնուլ ։ Ահա թէ ինչ խորհեցաւ ։ Տեսնելով որ թշնամիք համուզուած են իր թնկարողութեան վրայ , — ինչպէս ինքը կը փափազէր , — դարանի նրատաւ , հրամայելով իր Յովհաննէս Ալակաս զօրավարին՝ թշնամեաց ներկայանալ և կեղծ կողէ մը վերջ փախչիլ՝ թշնամիները իր հետ ձգելով ։ Առաւօտ էր . թրակիոյ գաշաերը հազիւ սկսած էին ըլլալով ճերմկաւորաւոր

արթնոցոյ հոկայաձև բարբարոսները թշնամիներու զունդ մը նշամարեցին իրենց գիծաց ։ Ինչ ուրախութիւն . կուտի կորուսեցած էին . Փացինաքները , որ բանակի առջևը կը գրասնուէին , ամենէն առաջ զէնք կ'առնուին , կարգի կը մտնան և կը յարձակին Յունաց վրայ ։ Յովհաննէս Ալակաս մի քանի վայրկեան կանոնաւոր գիծագրութիւն կ'ընէ , յետոյ առոժնանաբար կը մեղմացնէ , և հուսկ ուրեմն փախուստ կը սկսի ։ Ահա իր պղաղակներով իրենց կը հնամամին բարբարոսները . յանկարծ , իրենց ետեւը , թմբուկներ , փողեր , վահաններ կը դռան , կը խառնուին հազարաւոր ռազմիկներու մեծագոյ ձայնին հետ , և վարդի բանակը զազանաբար կը սկսի Փացինաքները ջարդել ։ Սարսափ , շփոթութիւն , յուսահատ կատաղութիւն տիրեցին թշնամեաց վրայ . կը ջանան կարգի մտնել , գիծագրել , յաղթել . բայց նոյն վայրկեանին յունական երրորդ բանակ մ'ալ կը հասնի , արեւահեղութիւնը կ'աճի , Փացինաքներ կը սպաննուին , կը դերուին , առանց բացառութեան ։

Չօրաց կատաղութիւնը չմարած , վարդ կը գիտէ ուղղակի Ռուսաց բանակին վրայ . իր նպատակն էր երկու լեւերը պահել ձիին փշրել . բայց անոնք , սարսափահար , ձուլուած էին , կեղբոնացած ։ Խառնուրդը սկսաւ՝ երկինքը լեցնող փոթորակաց փոշով և սղաղակներով ։ Վերամպոյն տեսարանն եղաւ առաջինը , հեծեղալունդեբուն բաղխումը , երբ պատերազմը կարծես օդոյ մէջ սեղի կ'ունենար , երբ ռազմիկներ և երկիւրներ կ'իշխային , կը կուտուէին իրարու վրայ ու զէնքերու տակ կը թաղուէին ։ Վարդ , մերկացած սուրբ օգին մէջ բարձրացուցած , շանթը բռնող Արամազդ մը կը թուէր . արհաւիրքներու կեղբոնը կը նետուէր , կը իրախուսէր , կը հրամայէր , նախ ինքը՝ իր հրամանը կատարելով ։ Իր հետ կը պանար իր եղբայրը՝ կոստանդին . նա իր ծնողներէն՝ հաւասար ժառանգութիւն մը ստացած էր ուժի և արութեան ։ Վարդ կոտորածի զբազած է , երբ հսկայ թշնամի մը աչքերը սրած՝ ինչպէս որսը գտած արծիւ մը , ուղղակի սպարապետին վրայ կը

5-5-205

զիմէ և վազակաւորի հարուած մը կ'իջեցնէ սաղաւարտին. սա կը ծօխ, բայց չի փշրիր: վարդ Արքեւոս կը փութայ հարուածին պատասխանը տալ. ուորը կ'իջեցնէ Ռուսի գանկին, որ երկուքի կը ճեղքուի, գլխուն մէկ մասը թոյլ կերպով մէկ ուսին վրայ կ'իջնայ, ու մէկը՝ միւսին. մինչ սարսփահար նժոյցը՝ անպշտի հսկայն առած՝ կը պտրացնէ ուսական բանակին մէջ: «Վրէժ» կ'աղաղակէ արիշ Ռուս մը և կը զիմէ վարդի վրայ. յոգնած է նա, ուժաթափ. իր տեղը՝ իր զիջացն հղբայրը յտաջ կը նետտի իբր փոշոյնան. ուժգին հարուած մը պատրաստած է նա բարբարոսին համար՝ որ մէկ շարժուելով սակից զինք յուսախար կ'ընէ: Հարուածը կը վրիպի, բայց ձիւնն կը հանդիպի, սրուն գլուխը կը թոյնէ. բարբարոսը՝ իր ձիուն հետ գետին կ'իջնայ. վար կը նետուի կոստանդին, կը սպաննէ, վերստին թամբին վրայ կ'իջնէ և աներեղոյթ կ'ըլլայ թշնամեաց բազմութեան մէջ, որ իր սուրը՝ մանպղ մը կը թուի՝ Մահէն գողցուած: Իր շուրջը մեծագոյն քաջութիւններ կը զործուին, որ չարձանագրուեցան, որովհետեւ զօրավարի մը չէին պատակներ: Յոյներէն ոչ ոք առանց վերքի պարձաւ այս կողմէն. բայց մեռալները հարկուէն աւելի չեղան. մինչդեռ Ռուսերէն՝ սպանուեցան 25,000 հոգի:

Չմշկիկ, այսպիսի յաղթութեան մը լուրն աննելով, խորապէս արածեցաւ. մասնակից եղած չէր անոր:

ԺԳ. — Չմշկիկէ արշաւանքը. — Փարսութլուա՝ երկու օրուան մէջ առնուած. — Արքունիքը բոցերու մէջ. — Յովհաննուպօլիս:

Բուրը ձմեռը՝ պատրաստութեամբ անցուց Չմշկիկ, զօրացնելով մասնաւորապէս Իլիզանդական նաւատորմիդը: Երբ եկաւ գաւառուը, պատերազմի եղանակը, Չմշկիկ, զէնքերը օրհնել սալէ վերջ, խաչի գրօշն ձեռին, Հնուս լեռնէն Բուլղարիա դիմեց: Բանակին առջեւն՝ Անմահից զուսը կ'երթար, յետոյ կու գային Հինդհարիւր հետեակներ, և երկբաւասան հազար հեծեալներ:

Թմբուկներու, ծնոյցաներու, փողերու

աղամարդկոյ ազմուկով՝ Փարսութլուա քաղաքին վրայ յարձակեցաւ: Յանկարծ դռները բացուեցան և Ռուսերը — հեծեալ, հետեակ, ու առմիկ ամբօրը, — միանպամայն Չմշկիկի բանակին վրայ խուժեցին: Մինչդեռ անանք կոյր եսանդով կը կողմէն, Չմշկիկ զօրագունդ մը անցուց իրենց հետև, քաղաքին մուտքը արգիլեց, և ութ հազար հոգի սպաննեց: Երկրորդ օր, բարձր բեմի վրայ կանդնած, վստիչ Մենեկապանի նոր բերած բանակը ցուցնելով՝ Չմշկիկ պերճ ճառասիրութեամբ մը՝ Ռուսերը անձնատուր ըլլալու յորդրեց: Անոնք մերժեցին. յարձակողականի նշանը տուաւ. տանդուներ բարձրացան. քաջեր վեր խուժեցին, ներս մտան, դռները բացին: Անհայ կոտորած մը սկսաւ. սուները՝ բոցերով ծածկուած էին, փողոցները՝ արեամբ: Արքունիքը սակայն միջնաբերդի պէս ամուր էր, և ութ հազար Ռուս հոն կեդրոնացեր էին: Ի սկզբան գուռ բաց թողուցած էին, որպէս զի աւարառու գիւնդուներ ներս մտնեն, բռնուին, սպաննուին: Չմշկիկ, նենգութիւնը իմանալով, չորս կողմէն պաշարեց զայն. առաջին յարձակողն ինքն եղաւ: Ռուսեր յամառաբար կը դիմապրէին: Տեսնելով Չմշկիկ՝ որ զէնքով արքունեաց արիւնքը համար՝ շատ գուհեր պէտք է տալ, կրակ տուաւ արքունեաց. բոցեր շրջապատեցին զայն. ամէն Ռուս, որ փախչիլ փորձեց, սրախողող եղաւ: վարդի զուսը միայն՝ եօթ հազար Ռուս սպաննեց: Բուլղարաց Բորիս արքայն և իր ընտանիքը՝ անշուք տան մը մէջ գրանուելով՝ ուրիշ աւարներու հետ՝ Չմշկիկի բերուեցաւ:

Փարսութլուա, իր տէրերուն հետ՝ անունն ալ փախեց. ի յիշատակ երկու օրուան մէջ տարուած մեծ յաղթանակին՝ կոչուեցաւ Յովհաննուպօլիս:

ԺԵ. — Տեղափոխութի պաշարուը. — Մեծամարտ Աբարաբոյ և Ռուսի. — Չմշկիկ Ռուսաց իշխանը մեծամարտի կը կոչուէ. — Պատերազմ. — Յաղթանակ:

« Դէպ ի Տրիսթրա » բուս Չմշկիկ իր զօրքերուն՝ տանց անոնց հանդիսա շնոր-

Հելուս : Հոն ամբացած էր վինցէսլաւ , Ռուսաց ընդհանուր հրամանատարս :

Ճանապարհէն վրայ՝ տիրեց Չմշկիկ բերդերու , գրեգորեան , աւաններու . իր յառակապահները , — երեք հարիր հիծածիւ , — յաղթեցին իսկ հապար Ռուսիս : Քաղաքէն քիչ հետո՝ երկու մեծ բանակները բազմուեցան իրարու . պատերազմը տեւեց առաւօտէն մինչև խոր գիշեր . բազմը՝ տասուերկու անգամ փոխուեցաւ . Չմշկիկ , ուր ի ձեռին , ամենուն առջեւն ինչնամանայ մէջ կը նստուէր ու կը հնծէր . ամենէն ահեղ կոտորածը իր շուրջ կ'ըլլար , իր համար : Յաղթանակը Յոյներ տարին . կայսրը շնորհակալութիւն մատուցց Ս . Փլեորդի , որուն անուն էր , իր գլխակցութեանը համար . կոստանդինա , շրջակայ բազմաքները , ահարեկ , իրենց բանալիները գրկեցին Չմշկիկի :

Մինչդեռ կայսրը նաւատորմին կը սպասէր Տրիսթրոյի վրայ ընդհանուր յարձակումն սկսելու համար , Ռուսերու բազմութիւն մը գուրս խուժելով յանկարձ՝ զինք կոտի բնապատեցին : Յանդպնութեան պատիժը ահաւոր եղաւ . մեծագոյն մտաւ ջարդուեցաւ , անոնց մէջ՝ Սիփակէլ , վինցէսլաւէն վերջ՝ ամենէն նշանաւոր զօրավարը : Ռուսեր ջաղաք փախչել ուզեցին . բայց Չմշկիկ զանկ մ'անցուցած էր իրենց ետեւ և քաղաքին մուտքը սրգիլած . ամէնքն ալ սպանուեցան :

Վինցէսլաւ , իր պաշարին անբաւականութիւնը տեսնելով , փոխորհալից գիշերուան մը հովանայն ստակ , երկու հազար հոգով նաւակ մտաւ , անցաւ Յունաց նաւատորմի մէջէն , շրջակայ գրիգորու կողպուստով առաս պաշար հաւաքեց՝ և նոյն վտանգալից ճամբով քաղաք մտաւ : Յոյն ծովակալը հազիւ ազատեցաւ Չմշկիկի զայրոյթէն : Վրէժ անհելու համար՝ յարձակման սկսաւ . մեքինայները՝ պարիսպներ կը փռնայնէին , իր զինուորները՝ ռազմիկներ . Յովհաննէս Գուրգէն , կայսեր հօրեգործորդին , մեքինայ մը Ռուսերու յարձակման դէմ պաշտպանած ժամանակ՝ նիզակի հարուած մ'ընդունեցաւ լանջքին վրայ , և անշնչացած ընկաւ : Աննմաս Արարացին , ինչնամանայ գունդերը

ճեղքելով , յարձակեցաւ իքմար սուս զօրավարին վրայ . երկու բանակները , վայրկեան մը զործապուլ բրած , քաջաց բազմուր գլխակցին . յանկարձ ցաւապին ազգակ մը բարձրացաւ Ռուսերէն : Աննմասի մէկ հարուածը՝ գեական փռած էր իքմարի գլուխն և մէկ սուր : Այս միջոգէպը վհասեցուց Ռուսերը , սրոնց կոտորածը զպրեցաւ՝ գիշերուան միջամտութեամբ : Միութեան մէջ կը լսուէին անպաղար՝ ոտնալու ձայներ , որ սաստիկ տխուր ատպարտութիւն մը կը գործէին յոյն ռազմիկներուն վրայ . իքմարի թաղման հանդէսը կը կատարուէր . մարդիկ և քաղապաններ զոչեցին իր գերեզմանին վրայ : Պաշարի պակասը բնապատեց զվինցէսլաւ . վերջին և յառաջատ յարձակում մ'ընելու . գետնի անհաստարութիւնը աննպաստ ըլլալով Յունաց , Չմշկիկ կեղծ փախուստով մը՝ գիրեք գաշար ձեց , յետոյ ետ վարձաւ , և ամենէն առաջ նստուեցաւ ինչնամանայ մէջ : Վայրկեան մը կայսեր կեանքը կորսուած համարուեցաւ . հայկական գունդ մը սակայն զինք շրջապատեց , բուն կողմ վերջ ազատեց : Յուլիսի օր մ'էր , խոգուկ սաք . տակաւնելով ջուր և գինի կը հասցնէին Չմշկիկի ռազմիկներուն՝ որոնց ծառայար սակայն՝ միայն արիւնհեղուցութեամբ կը մարէր : Մինչ ամէն ոք իր արտոյնին հետ կ'ողորմէր , թէկոպր , հեծեալներու զօրավարը , գլխորեցաւ իր ձիուն ներքեւ . սպանուելու վրասանցի մէջ՝ Ռուսի մը գօտին բռնեց և զայն քաշկոտեցով՝ զործածեց իրբեւ վահան՝ մինչև որ օգնութեան հասան : Խտանուրդը ժամերով տեւեց . երկու բանակներն ալ յոգնեցուց , բայց յաղթութիւնը ոչ մէկուն ընծայեց :

Չմշկիկ , զիւցազնիբական քաջութեամբ վառուած , Ռուսաց վինցէսլաւ իշխանին հրաւերը զրկեց միայնակ իրեն հետ մենամարտի գալու , եթէ ասպետական հաղի սննի , եթէ կ'ուզէ մէկ հարուածով երկու բանակներու բազմը վճռել : Վինցէսլաւ՝ որուն հասած էր Չմշկիկի առաջապահան ճարտութեան և անձնական քաջութեան համարաւ , այսպէս պատասխանեց . « Թշնամիէս իւրհուրդ չեմ ընդունիր . եթէ Յունաց կայսրը ձանձրացած

է կեանքէ, կրնայ մեռնելու ուրիշ միջոցներ գտնել » :

Չմշկիկ, զայրացած, թշնամեաց կեցրոնին վրայ յարձակեցաւ այնոյիսի թափով՝ որ շանդարագրեան անոնք թէ նոյն պահանջն վարչ Սըքերոս իրենց բանակին ետևը կ'անուցնէր և քաղաքին մուտքը կ'արդելուր: Կասապաթիւնը երբէք բարձրագոյն աստիճանի հասած չէր՝ երկու թշնամեաց մէջ ալ: Աննմաս Արաբացին, իր առաջին յաջողութենէն խրախուսուած, Վինցէչուաի վրայ յարձակեցաւ, և զայն ձիէն վար զլսրեց. բայց թշնամիներէն պաշարուելով՝ սպանուեցաւ: Իր զօրքերուն՝ մշտաբար ժամանակ չուուա Չմշկիկ. գոռաց, կայծակի նման սլացաւ գունդերու մէջէն, սկսաւ Ռուսեր կուսորել. նոյն պահուն փոթորիկ մ'ալ ելաւ, որտուտ, կայծակ, փայլակ, անձրեւ, հողմ՝ որ ջուրով և փոշիով Ռուսերը կը կուրացնէր: Տեսան Բուզանդացիք օգին մէջ ճերմակ ձիաւոր մը, Ս. Թէոդորը, որ կայսեր աջ կողմը անցած՝ կ'օգնէր անոր՝ Ռուսեր ջարդելու: Յուսահատաբար սկսան զէպ ի քողաց փախիլ. ճամբան գոցուած էր. վարդ նոր ջարդ մը աուաւ: Տասն և հինգ հազար Ռուս մնան. քիչեր, որոց մէջ Վինցէչուա, լեռներու և գաշաբուտ մէջ ցրուելով, կրցան կեանքերնին պահպանել: Ամէն այն վերք ընդունած էր. բայց մեռան՝ Սիայն 350 հոգի. (971):

Ռուսեր հաշտութիւն խնդրեցին Չմշկիկէն՝ խոստանալով յանձնել ոչ միայն Տրիսթրան, այլ ամբողջ Բուլղարիան, միայն թոյլ արուի իրենց՝ անվանոց հայրենիքնին զանալ: Վինցէչուա և Չմշկիկ, պարտեալն և յաղթականը, նշանաւոր տեսակցութիւն մ'ունեցան, ուր Հայ կայսրը խոստացաւ ամենայն պաշտպանութիւն ընել Ռուսաց: Բայց փացինարները, ճանապարհին վրայ, սպաննեցին զՎինցէչուա: Յետ զՏրիսթրան Թեոդորոս պոյիս անուանելու, որովհետեւ Ս. Թէոդոր մեծ մասն ունեցած էր այս յաղթութեան մէջ, կայսրը գիմեց ի Բիւզանդիան:

Անպատմելի եղաւ ժողովրդեան խանդավառութիւնը՝ երբ լսեցին թէ կայսրը յաղթած է և կը դառնայ Պոլիս: Բոլոր Բիւ-

զանդիան դատարկուեցաւ՝ խոնելով Ռուսիկն զբան առջեւ: Ռուսիշոց յաղթական կառքը, որուն չորս ճերմակ նոսրոյնք ընուած էին, կը սպասէր կայսեր: Այն պահուն երբ Չմշկիկի կրեցաւ, պտակ ի զլուի, ճերմակ օգուտար նոսրոյի վրայ հեծած, շրջապատուած պատերազմական զորակնիքը, զօրավարնեք, զերկնիքը, վաշաերէ, երկու կողմէն ազակիներ միմուրարը լծուացոցին. ժողովուրդը կը ծափահարէր, կեցցէչներ կ'աղաղակէր. զօրքեր յաղթութեան և ուզմի հրգիր կը հնչեցնէին, արթնցնելով Չմշկիկի սրտին մէջ փափագը՝ փոխելու ճամբան, գտնուու զէպ ի պատերազմ, զէպ ի փառաց զաշար: Չմշկիկ չկրցաւ առանց սարսուռի տեսնել սիրոյ այն ցոյցերը՝ զոր ժողովուրդը կ'ընէր. բոլոր Բիւզանդիան արքունիքի երեսյթ տուած էր, ակն փողոց՝ գաշճի. ամէն կողմ փռուած էին զօրքեր՝ և անոնց վրայ գովինիներ: Չմշկիկ յաղթական կառքին մէջ գնելով Բուլղարիայէն բերած Ս. Աստուածածնոյ արձանը, նոսրով շրջան բրաւ բոլոր քաղաքին մէջ, կոխելով միշտ զօրքեր, ծափեր, գովինիներ. յետոյ Ս. Սոփիա մուա, շնորհակալ եղաւ Աստուծոյ, և Բուլղարաց արքունական թագը՝ և կեցեցոյ նուիրեց:

Բուլղարիան, հին և ահեղ թշնամին, իր սէրութեան նահանգներէն մին եղաւ: Այս աշխարհակալութիւնը նշանաւոր է պատմութեան մէջ՝ իր քաղաքական կարեւորութեամբ և կէս տարուան մէջ՝ այնքան եւրապարար կատարուած ըլլալուն համար: Չմշկիկ՝ Բորիսը գահազուրկ հռչակելով իր պալատատիրաններէն մին բրաւ գայն, ինչպէս բրած էր նախնիքներէն մին՝ Տիպրան Բ. իր յաղթած թագաւորներուն:

ԺԵ. — Արաբական պատերազմ. — Հոյ կայսրը և Հայոց թագաւորը. — Չմշկիկ Բարեւնի մտ. — Երբորդ արշաւարդ. — Աստուածան, Լիբանան, Պաղեստին ընդհուած:

Այս դարուն, ուր ամենէն տիրապետող — զազափարներուն մէջ — կրօնականն էր, Արեւելքի պատերազմը նկատուած էր ոչ այն-

քան իբրև բազաքական խնդիր մը, որքան պայքար մը՝ քրիստոնէութեան և իւրամուլթեան։ Պաղատաւ Աբարներ, Եղիպտացիք, Պարսիկները գաշնակցութիւն մը կազմաւորած էին, համալրամական ձկառններով, և 100,000 զօրք ուղարկած Անտիոքայ վրայ։ Չմշկիկ կը ծրարէր, իր կարգին, աշխարհակալութիւն մը, որուն համեմատ նախ պիտի տիրէր Երուսաղէմայ, Քրիստոսի սուրբ զերեզմանը պիտի ազատէր, պիտի անցնէր Պաղատա, որ Արարացոց բազաքական կեդրոնն էր, և անկից Մեքքէ։

Անտիոքը Արարացիներէն ազատելու համար՝ Միջնադարի զօրքերը հսն կեդրոնացուց, նոր բանակ մ'ուղարկեց Եկիպտայս պատերկին հետ, և մէկ պատերազմով ոչնչացուց թէ՛ Թշնամեաց բանակն և թէ՛ գաշնակցութիւնը (970)։

Բաւղարական պատերազմէն յետոյ կրկին յարձակողականը սկսաւ Արարացոց զէմ։ Մշնհ սպարապետը՝ Եղեսիան աւերեց, Մծբնըր ստաւ, Տիգրանակերտը պաշարեց. ստար ընտակչնիւրէն 400 հոգի, օգտուելով փոթորիկէ մը՝ որ յոյն վրանները Տիգրիս կը թափէր, և փոշիէ մատախուզ մը կը սփռէր օդին մէջ, յոյն բանակին վրայ յարձակեցան և անոր մէկ մասը կտորոյցին։ Այս զոյքը անկեղծ կոչորք պատերազմի գաշար իջաւ։ Կ'ուզէր Միջնադար մանկէ՝ Տարոնի ճամբով, Հայ Ժողովուրդը հաշտ աչքով չէր տեսներ՝ յոյն բանակին անցքը իր երկրէն։ Աշոտ Ողորմած՝ 80,000 զօրքով Եփրատի ափանց վրայ բանակեցաւ. իրմ գտա՝ կային հսն սերիչ յորս թագաւորներ. Փիլիպպէ՝ կապանի, Գուրգէն Ա՝ Ալլաանից, Արաս՝ Կարսի, Կենեքերիմ՝ Արծրանեաց. Հայ թագաւորը պատրաստուած էր պատերազմ մել չայ կայսեր զէմ, եթէ նա ս և է փաստ հասցնէր իր երկրի ամբողջականութեան։ Չմշկիկ՝ Մուշ քաղաքը մտաւ և բանակը դրաւ Այծնաքերիկի առջև. ամբողջ գիշեր, Ստաուրի հեռակապազնպր յարձակումներով նեղեց յոյն զօրքերը։ Երկրորդ օր բանակցութիւնը սկսան. Չմշկիկ ծանայց՝ թէ իր նպատակն սրիչ բան չէր՝ բայց եթէ անհաստից զէմ կտուիլ։ Աշոտ սոս հազար ընտիր զօրքեր

ընծայ բրաւ կայսեր՝ առտո պաշարի հետ։ Չմշկիկ՝ Մուշէն երնեղծ, կայծակի երազութեամբ կը յառաջէր. աերեց Տիգրանակերտի, Կիլիկիայի, Մէլիտինի, Մծբնայ. մտահեցաւ Պաղատաի։ Հոս կ'իշխէին Պոթիմար ամիրայետը և Ալ-Մոթի խալիֆայն, երկուքն ալ զուարճաւոր և անկարող։ Կայսեր մերձաւորութիւնը այնքան սարսափ, յուզում, ապստամբութիւն պատճառեց, որ խալիֆայն ստիպուեցաւ հրաժարական տալ։ Պաղատաի դրաւմը Չմշկիկի առաջին արշաւանքին պտակը պիտի բլլար. բայց կայսրը նահանջեց՝ ջուրի և պաշարի պակասութենէն բռնապատուած։ Իր քաջագործութիւնք այնքան հռչակուած էին՝ որ արարացի կանույր «Չմմշկիկ» ի անունը կու տային, իրենց աղաքը սարսափեցնելու համար։

Չմշկիկ յաղթանակաւ Պօլիս մտաւ. թէպէտ Բարեբոնի բանալիները իր հետ չէր բերեր, ինչպէս կը փափազէր, բայց տէրութիւնը երբէր աւելի զօրաւոր եղած չէր Ասիայ մէջ. — Պաղատաւ ամիրայետը՝ հարկաւաւ գրուած էր կայսեր։

Չմշկիկ, բարեկամ Գերմանիայ, որուն կայսրոյրին ամուսնացած էր Թէոփանայի՝ (համանունն նշանաւոր թագուհոյն գտար) հետ, Արեւելէն վերապորձած պահուն՝ քաղաքականութեան զիրքը փոխաւած գտաւ։ Գերմանացիք Հոմայ գահուն վրայ դրած էին զԹենդիկիստու Է. հալածելով զԹենդիկիստու Է. որ Յունաց ընտրեալն էր։ Չմշկիկ, վրէժնորութեամբ վառուած՝ կ'ուզէր իր աւրութիւնը բաժնիլ Հումէն, և այս պատճառաւ, — ինչպէս զիտել կու տայ Կիլիկի գերմանացին, — պաշտանընկէց բրաւ վառիլ պատրիարքը, որ համալիր չէր իրեն՝ զայն ամբաստանելով կայսերական կիանքին զէմ դատաճանաւ։

Բայց եկեղեցական խնդիրները՝ ձմաւ տանակ միայն կրնային զբաղեցնել զՉմշկիկ. դարսւնը պատերազմի փողերը հնչեցուց, ու նա մեկնեցաւ Արեւելը՝ իրաւորձելու համար աշխարհակալութիւնը՝ որ իր գաղափարականն եղած էր։

Պաղատաի սիրապետումը, զոր յետոյ ամբողջ Երուսղա հաղի կրցաւ՝ միացեալ

ոյժերով ի գլուխ հանել, և զոր թասուց պիտի դիցազնիբարէր, եղած էր այն նուա- տակը՝ որուն պիտի հասնէր Չմշկիկ, իր զէնքերու շորհար միայն: Այս երկրորդ ար- շաւանքի թէ՛ դիցազնի և թէ՛ պատմագիրը՝ է Չմշկիկ ինքնին: Նա երկայն նամակ մը ուղղեց Հայոց Առաջ թողաւորին (ցարդ մնա- ցած՝ Մատթէոս Ռուհայեցոյ քով) ուր կը պատմէ մի առ մի իր պատերազմները:

Յետ փոքր աւաններու և դիպերու տի- բելու, որոնք իրեն բացակայութեան ժամա- նակ Արարացոց անցած էին, յարձակեցաւ Մծքնայ վրայ, տիրեց անոր, հարկ և դե- լիներ թառ, ու բազմաթիւ գտնէնքով, — որոնք մէջ Ս. Յակոբայ Նշխարները, — մտաւ անապատ՝ զոր բնդարձակեց: Բայց Ամիր- էլ-Մուսնի եզրկառացին կը սպառէր Չմշկիկի ճանապարհէն վրայ՝ ինչպէս ստվալլակ ա- որիս մ'իւր որսին: Խառնուրդը գազանային մարդնութեամբ տեղի սնեցաւ. ի սկզբան յաղթակաւ էին Արարացիք. Յոյներ վտան- զուեցան, բայց հասկ ուրեմ յաղթեցին: Եմեսացիք, Չմշկիկի հաւատարիմ, ուրախու- լանար ընդառաջ էլան իրեն. Պատայէք, լճաբուստ, երեւելի և ամուր բաղաք, յանդպ- նաբար դիմադրելու պատաստուեցաւ: Ընա- կիչները, նոյն իսկ քաղաքէն հետու, պա- տերազմ մղեցին Չմշկիկի դէմ, բայց յաղ- լուսելով պարխայներու մէջ ամփոփուեցան. Յոյներ տիրեցին Պատալըքի և աշխարհ կա- տորած բրին, որ Գամասկացիք, ընդառաջ ելան իրեն. Աֆթէլքին ամբարայն, որ կու գար ժողովրդիսն առջեւէն, վար իջաւ ձիւն՝ գե- տախը համարեց: Չմշկիկ սիրով ընդունե- ցաւ և հրամայեց իր հեծնաշնորհուն հետ՝ ձիախաղ մ'ընել զպատին մէջ: Հաւնելով Աֆթէլքինի ստպեւական ճարտարութեանց՝ անոր նիզակը և նոպրը յիշատակ ուղեց. Արարացի էմիրը, այս պատուին համար՝ յու- զաւած, վար նետուեցաւ ձիւն ու նորէն գե- տախը համարեց: Փոխադարձ բնծայներ արուեցան իրարու: Հաւասարութեան խա- տուեանքով և 40,000 զահկեանով՝ Չմշկի- կէն խաղաղութիւն ստացան: Չմշկիկ՝ ջրիւս- տանեայ գարձած Պարտաացի մը, թուրք անուամբ, Գամասկայի իշխան դրու. յետոյ

մտաւ Ս. Երկիրը: Ռիտի և աշխարհակա- լութեան կ'երթար միանգամայն. թոյլ շտուա- ուր իր զինուորները աւարտութիւն ընեն Տիրիսը, Նաղարթի, Գեկապոլսոյ, Գեռ- նեսարթի մէջ՝ որ անձնատուր եղան. նոյնը բրին Ռամէ, Պարտալու, Կեսարիա: Արա- բացիք, Չմշկիկի գարանի մէջ ձգելու հա- մար, հետապայ ոսգմագիտութիւնը գործա- ծեցին. միջնաշխարհի ճանապարհը պատ- թողով, ծովեզերեայ քաղաքները ամբացան. այսպէս եթէ կայսրը իրուսողսնի վրայ դե- մէր, որուն բնակիչները արդէն նուիրակ դրկած էին՝ հարկատու գրուելու համար, զինքը պիտի պաշարէին ետեւէն ու փակէին անապատսն մէջ: Կայսրը անդրադարձաւ Խ- ընց դիտուեանքը, և յետ հիստորային քա- ղաքները նստեցաւ, ծովեզերքի դիմը բռնեց: Յարձակեցաւ Պերտի վրայ, տիրեց, հա- զար Արարացի գերի բռնեց, որոնց մէջ Նա- սրը. Ամիր-էլ-Մուսնի զօրավարը: Սիլվանա- ցիք, իր մերձեակը լսելով, քաղաքին ձե- րիկը նուիրակ դրեցին. Բկրդոն կամ Պիլ- սոս բերդաքաղաքը՝ կոտով տնուեցաւ: Տրապոլսի շրջակայ աղբիւններն և ձիթատան- ները արմատախել եղան. Արարացիք աւե- րածը արդիւն ջանուցին, բայց կոտորա- ծով քաղաքը փասնու: Անձնատուր եղան Սիհան, Բաբանէա, Չարպա, Աքքը, Գա- բաւան, որ Չմշկիկ Քրիստոսի սրբազան հա- ղաթափը, Քրիստոսի հրաշագործ պատկեր մը, և Ս. Յովհաննէս Մկրտչի մաղիքը գտաւ. զանոնք որոշեց Պալիս տանիլ՝ մայրաքաղա- քը լծնաթիւնբերն սնտաթիլ բնելու համար: Բուր Պաղեստին, Ասորիք, Լիբանան ընկ- ճաւած ձիւն ետին ամուստ մէջ, ի բաց ա- ռեալ Տրիպոլիսն և Երուսողէմը: Արարացի- ները ոչս տեղեկու հանելու համար՝ Չմշկիկ Սիլվանի հարազտութիւնը գործածեց. սուղակի գիմեց անոնց կեդրոնին՝ Պաղես- տի վրայ: Կլիմայի ջերմութեան պատճա- րա՝ հիստորայնայով, ստիպուեցաւ, յետ այն- քան մտա հաննելու նպատակին, գառնալ գլու ի Բիզանդիան, իրեն տեղ՝ վերջը լուղ- լով Արեւելքի մէջ:

ժԶ. — Տխուր գուշակութիւնք. — Թունաւոր բաժա-
կը. — Չմշկիկի մահը:

Յաղթանակներու այս տարեշրջանին մէջ
գիտաւոր մ'երեւցած էր երկնքին վրայ, և
ութտուն օր, իր ներկայութեամբ, բուզան-
գացիները սարսափեցուցած:

Կայսրը խորհուրդի կանչեց ժամանակին
ամենէն հեղինակաւոր աստեղագէտները, ու-
րանց գլխաւորն էր Ստեփան, Նիկոմեդիոյ
եպիսկոպոսը, խնամալու համար՝ թէ ինչ գի-
տումով եկած էր ան: Ամէնքը կայսեր մա-
հը կը նախազգային, բայց սխուր ճշմար-
տութիւնը ծածկեցին իրմէ:

Չմշկիկի սակայն հրամայեց իր գերեզմա-
նը շինել՝ արքունեաց Ս. Փրկիչ եկեղեցւոյն
մէջ: Փոխանակ ժամանակաւոր պաշտաններու՝
լաւագոյն կը համարէր յօրինել, իր ճաշ-
կին համեմատ, այն ապարանքը՝ ուր բնոյ
միշտ պիտի բնակէր: Գերեզմանը աւարտե-
լու մօտ էր՝ երբ նա կը գտնար Բիւզան-
գիան: . . .

Կիլիկիոյ գաշապալայները հմայել պատ-
կերներ են, երբ մին Տարսուս բարձունքէն՝
մէկ նայուածքով հորիզոնը կ'ընդգրկէ: Մշա-
կուած արտեր, արծաթմաքայլ զեռեր, հսկումա-
կան տեսարաններ՝ անոնց սփռուքին վրայ,
կը զմայլեցնէին Չմշկիկի իր ամէն բայլին:
Յաճախ կը հարցնէր՝ թէ սրուն կը պատ-
կանէին այդ գեղեցիկ պարտէզներն և ար-
տերը:

— Վասիլ Սինեկապանի, կը պատաս-
խանէին միշտ:

— Ինչ, գուշկ հուսկ ուրեմն Չմշկիկ բար-
կութեամբ, անպիտան ներքինիք մը համար
է որ կայսրներ և բանակներ այնքան նե-
ղութիւն կը կրեն. ներքինի մը հարստաց-
նելուն համար է որ ժողովուրդը կ'աղքատա-
նայ, և այնքան երիտասարդներ իրենց կեան-
քը կու ստան: Այս երկիրներուն մէկ մասին
Նիկիիփոր արեցը, միսսին՝ ես, ու միսսին՝
սպարապետն Մլենհ. վասիլի մը համար ու-
րեմն այնքան աշխատեցո՞ւրք օտար երկիր-
ներու մէջ: Անարդ ներքինի մը հարստու-
նայ, ու աւրութիւնը աղքատութիւնէ առ-
նապի՞ :

Վասիլ Սինեկապանի լրտեսները՝ այս
խոքը խկոյն հայարդեցին անոր: Ժողովրդ-
գասէր էր Չմշկիկ, աղքատներու բարկեամբ,
կալուածատէրերու թշնամի: Սինեկապանը՝
միակ միջոց մը կը տեսնէր փրկութեան. —
Չմշկիկը սպաննել:


Կայսրը, Բիւթանիա հասնելով, ուղեց իր
այցելութեամբ պատուել զՍամանոս՝ Լեկա-
պետոսի թոռը: Նիկոմեդիոյ ծոցին վրայ, որ
հին ժամանակ Ալքսոնիոյ լճակ կը կոչուէր,
նա ունէր շքեղ ամարանոց մը Արրաս կո-
չուած: Բիւզանդացի կալուածատէրը, ի պա-
տիւ իր յաղթական կոյսեր, խնջոյք մ'ը-
նել ստաւ իր գրախտանման պարտէզին
մէջ: Մտաբեր կանաչ խումբերու մէջէն
ի յայտ կու գար, խաղաղ ու ժպտուն, Աս-
քանիոյ լճակը, որ կ'երկարէր, բերդեղայ
գետի մը նման, արևծե կանաչութեանց եր-
կու հեղեղներու մէջէն: Խնջոյքի ամենէն
զուարթ պահուն՝ սեւ սծիք մը կը կատա-
րուէր. — երբ ամէն որ բաժակը կը բարձրա-
ցնէր ի կենդանութիւն կայսեր, Չմշկիկ կ'ըմ-
պէր թոյնը՝ զոր վարձուած ներքինի մը գրած
էր իր բաժակին մէջ: Երկրորդ օր Չմշկիկի
հոգեվարքը սկսած էր. անդամները ընդար-
ժացի էին. կ'այլեր Չիւմսով, աչքերէն ա-
ռաս արիւն կը ժայլմէր, ուռեցրններ ելած
էին ուսին վրայ: Հրամայեց փութով կու-
տանդուսօքոյն տանել զինք և իր գերեզմա-
նին շինութիւնը աւարտել: Պալատ հասնե-
լով՝ սպրմութիւն բամենէ ստաւ աղբատաց,
հիւանդաց, բորստներու. յետ խոտաւանե-
լու Ալգրիանուպոլոյ Նիկոպոյոս եպիսկոպո-
սին, հոգին աւանդեց (10 փետր. 966):

Ժողովուրդը վասիլ Սինեկապանէն թա-
նաւորուած կը համարէր զինք. յոյն և արգի
պատմիչները ալ կարծիքն բնոյնած են: Աւելի
հաւանական չէ սակայն որ թէնփա-
նայի սրբիքները, թաղատարելու ստորիքին
հասած, իրենց մօրը վրէժխնդի թեղարու-
թեամբ, գաւառնած ըլլան հայ կայսեր
զմբ. — իր բացակայութենէն օգտուելով, —
և վասիլ Սինեկապան, իր ապագայ աւերե-
րուն հաճոյ ըլլալու համար, գործակցած
ըլլայ անոնց, մանաւանդ որ Ապուլֆարաճ
յայտնապէս կ'ըմէ թէ Չմշկիկի թունաւորոզն

եղած է Թեոփանոյի եղբայրներէն մին: Սա-
կախ Ելիմպէտէ, — արուեստով՝ բժիշկ, —
Զմէկիկի հիւանդութեան արդիւնքները է նը-
կատի առնելով, անկարելի կը համարի սր
թոնաւորուած ըլլալ, որովհետեւ այդ երե-
ւոյթները ս'չ մէկ թոյնի յատուկ չեն: Հե-
տեւորար իր հիւանդութեան ուրիշ բան չէր,
բայց եթէ մին ջերմի այն չարատանջ տե-
սակներէն, զոր Ասիայէն իր հետ բերած էր:

Մեծած պահուն՝ յիսունն և մէկ տարեկան
էր Զմէկիկ: Թաղաւորած էր վից տարի և
մէկ ամիս: Այս փոքրիկ ժամանակամիջոցը
բաւական եղած էր իրեն՝ պատմութեան մէջ
անմահանալու, իրրի Ռիզանովնի Ալեք-
սանդար: Մեծ ու քոթը, կ'ըսէ Ալպուֆարան,
լացին իր մահուան վրայ: Գալստիանէն Երկրա-
չափ իր դամբանականը խօսեցաւ: Ժողովուր-
դը ազմկաւոր ընդունելութեան մը պատրաս-
տուած, յուզարհաւորութիւն կը կատարէր,
— բայց անշուշտ ամենէն շքեղ յաղթմանակն
է, Թաղաւորի մը համար, այն յուզարհա-
ւորութիւնը՝ ուր կ'արտասուէ ամէն աղբաւ
և ամէն զինուոր:

Հ. Կ. Տ. ՍԱՆՏԻՆԿՆ



Հ Ա Յ Ա Ջ Գ Ի

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԽԱՐՏԷ

Ուրախ սրտով կը ծանուցանենք ազգիս՝ Մխի-
թարեան նախկին աշակերտներէն՝ Պր. Անտոն Մի-
միտեանի կոտանդնուպօսեցեւոյ, Պր. Ռափայէլ
Պազարեանի Երզնկացեւոյ, Պր. Պապտիկ Յով-
հաննիսեանի Մշեցեւոյ և Պր. Էմիւն շինկեօցեա-
նի Տրապիզոնցեւոյ, 1905 տարուոյ մէջ Համա-
լսարանական ընթացքին լիուր յաղութեամբ
աւարտելնին՝ Պատուա թաղաքի մէջ, և հանդի-
սաւորութեամբ պատկաւորուելնին՝ իբրեւ վար-
դապետը-Ռեշիւրեան և վարդաւարեան:

Գազմավիպիս խմբագրութիւնն՝ Թարգման ըլ-
լալով Մխիթարեան Վերահռութեան անուան զաց-
մանց՝ հանդիսապէս իւր ուրախացութեան շնոր-
հաւորութիւնները կը յայտնէ վերոյիշեալ նորա-
պսակ բժշկապետներուն, որոնց դժբաղուսիկ
մանկութենէն սկսեալ՝ խնամածու եղած է Միա-
բաւութիւնս, և իրենց արծանաւորութիւննին

գնահատած, և գիրենք քաջալերած է միշտ՝ իրենց
երկարամեայ ուսմանց շրջանին մէջ, նոյն իւր
տարրական դպրոցներու և միջնակարգ վարժա-
բաններուն մէջ յԱրեւելս, և յետոյ իւր Մուրա-
նափայտեան Լէզիսին և Համալսարանական
ամբիթոցներուն մէջ ի Վիեննիկ և ի Պատուա:

Վերոյիշեալ բժշկապետք՝ շնորհիւ իրենց ընտիր
վարուց, ազնիւ ձիրքերով, կամքի տոկունու-
թեամբ և մտաւորական հարստութեամբ՝ արդա-
բացուցին իրենց վրայ գրուած յոյսը, ոչ միայն
իրենց անմիջական դաստիարակներէն և ուսու-
ցիչներէն, այլ և Միաբանութեանս ընդհանրու-
թենէն, և անմահ բարեբարացն Սամուէլ Մու-
րատի և Եղուարդ Ասփայէլի՝ հայազգի ման-
կանց վրայ աներեսութեամբ հսկող և գործու-
րացող հոգիներէն:

Վերոյիշեալ պատկաւորեալ գիտուններն՝ ներ-
շնչուած Մխիթարայ — Մուրատայ — Ռափայի
մեծ գաղափարականէն, վստահ ենք՝ որ իրենց
այսքան տարիներու ճշման արդիւնքներով պիտի
փայլին իւրաքանչիւրն իրենց ընտրած մասնա-
ճիւղ-բժշկութեան մէջ, և իրենց գիտական բարձր
արուեստին բարեբար ազդեցութիւնը սպազայի
մէջ իտրապէս զգացնել պիտի տան՝ ոչ միայն
հայազգի վշտակներոց, այլ և համազգային բա-
րեգործութեամբ՝ մարդկային ամէն գասակարգի
ախտակիրներուն, բժշկելով իրենց հիւանդու-
թիւններն ու վէրքերը, և առողջներուն՝ իրենց
քաջողութիւնը պահպանելու համար՝ նախա-
պահեստ զգուշութիւններ և կանոններ աւանդե-
լով:

*
**

Պատշաճ պիտի համարէինք վերոյիշեալ նոր-
բժշկապետներէն իւրաքանչիւրին կենսագրական
ծրագրծնին՝ երկտողով մը ծանուցանել ընթեր-
ցասէր հասարակութեան, եթէ ժամանակիս
պարագաները չտարիպէին գմբգ փափկանկատու-
թեամբ զանցառու ըլլալու այդ պատշաճողու-
թեան:

Նիկայի չենք ուզեր անյիշատակ թողուլ իրենց
ընթացակից երիտասարդի մը նուիրական հետ-
քը, Էմիւն Թօփայեանի Աբասապեւոյ, որուն
ծաղկատի գարնանային կեանքը և շնորհափայլ
մտաւորական ու նիւթական ձիրքերը՝ տարիէ
մ'աւելի է՝ որ սեւ հողերը ծածկած են արուա-
տաւթոր աշներէ՝ իւր դառնակսկիծ ազնիւ ճնո-
ղաց և մեծաւորաց, ինչպէս նաեւ սրտախոց
դաստիարակաց, ուսումնակցաց և բարեկամաց:
Հանգուցեալը՝ նախկին աշակերտ Մխիթարեան
վարժարանին Գասար-Գիւղի (Կ. Պոլիս), իր գեր-
ագնիւ ընաւորութեամբ և քոջ ուսումնասիրու-